

արդեւ / in view



ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՄՇԱԿՈՅԹՆ ՈՒ ԼԵԶՈՒՆ՝ ՅԱՌԱԶԱԴԻՄ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾ, ԻՆՔՆԱՏԻՊ, ԵՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿԻԶԱԿԷՏԻՆ

Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքը մեկնարկած է նպաստի նոր ծրագիր մը՝ **արդեւ**: Այս նոր նախաձեռնութեան միջոցով, Բաժանմունքը պիտի սատարէ արեւմտահայերէնով մշակութային ստեղծագործութեան, ամրապնդելով լեզուի եւ մշակոյթի միջեւ եղած ներքին ու արտաքին կապը:

«Մեծ ուրախութեամբ է որ կը ներկայացնենք այս նոր ու իւրօրինակ ծրագիրը, որ առիթը պիտի ընծայէ արեւմտահայերէնը գործածելու որպէս ստեղծագործութեան եւ մշակութային արտադրութեան ժամանակակից լեզու», – կ'ըսէ Բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեան, – «հոս է որ լեզուն եւ մշակոյթը պիտի շաղկապուին աշխարհին հետ եւ մնան կենսունակ ու ժամանակակից»:

արդեւ ծրագիրը կը քաջալերէ որեւէ ստեղծագործ կիրարկութիւն, արտայայտութիւն, կամ ներկայացում՝ ուր լեզուն կարեւորագոյն գործօնն է:

Ծրագրերը կրնան ըլլալ միջգիտակարգային եւ դիմել արտայայտութեան զանազան միջոցներու, ներառելով՝ գրականութիւն, երաժշտութիւն, տեսողական արուեստներ եւ նորարար հեռարձակումներ:

Արդ, արեւմտահայերէնն է արարումի հիմնական միջոցը: Այս մասին հարցազրոյց մը ունեցանք ծրագրի պատասխանատու Ծողեր Մարկոսեանի հետ. –

«ՆՅ» - Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութիւնը մշակութային նոր ծրագիր մը կեանքի կոչած է՝ **արդեւ** վերնագրով, որ մեկնաբանութեան կը կարօտի: Առաջին ակնարկով ըմբռնելի վերնագիր մը չէ, ինչպէս «երգ, պար, խորոված, զինի...»: Ինչո՞ւ այս վերնագիրը:

Ծողեր Մարկոսեան - Այս նպաստի ծրագրին հիմնական բաղադրիչներէն է ներկային հետ ստեղծագործ առնչութիւնը: **արդեւ**-ը ժամանակակցութիւնն է, այսինքն ապաշփմէին պատասխան մը. հիման է, կամ կը փորձէ հիմային կամ ներկային մերձեանք: Ժամանակակցութեան բացը գոցելու կը միտի. քայլ մը, որպէսզի արեւմտահայ մշակոյթն ու լեզուն առնչուին մեր ժամանակին հետ, արդիին հետ, եւ զուգահեռութիւն մը գոյանայ անոնց միջեւ: **արդեւ**-ը հայերէնով մշակութային արտադրութեան շուրջ մտածելու, խորհրդածելու եւ վերլուծելու առիթ մըն է, պէտք է ըլլայ. ինչո՞ւ ձգտիլ ժամանակակցութեան, ինչպէ՞ս ըլլալ ժամանակակից, ճիշդ ի՞նչն ու ո՞վ է ժամանակակիցը, ինչպէ՞ս լեզուն բերել դէպի ներկան՝ դէպի որեւէ ժամանակի մը ներկան, լեզուն եւ մշակոյթը ժամանակի հետ ինչպէ՞ս կ'առնչուին եւ ո՞ւր է ասոր արժէքը, իսկ հրամայականը կա՞, ինչո՞ւ: Այս հարցումներէն մեկնած, եւ լեզուն մշակոյթի զանազան կառուածներուն հետ նորովի կապելու միտումով է որ մշակուած է այս նպաստի ծրագիրը, իսկ վերնագիրը ատիկա կ'արտացոլէ:

«ՆՅ» - Վերնագիրը ինքնին լեզուային խնդրի առջեւ կը դնէ. լեզուն երկրորդ անգամ խնդիր կը դառնայ ծրագրին անգլերէն վերնագրին պատճառով՝ *in view*, ֆրանսերէնով՝ *en vue*, այսինքն մեր տեսադաշտի՞ն մէջ: Այս ալ թարգմանութեան եւ թերեւս ալ նորէն մեկնաբանութեան հարց մը կը յատաշացնէ:

Ծ.Մ. - Տրուած ըլլալով որ Բաժանմունքի հաղորդագրութիւնները առնուազն երկլեզու են, հետեւաբար այս նպաստի նոր ու աննախադէպ ծրագիրը անգլերէն վերնագիր մըն ալ ունեցաւ: Հոս մէկ վերնագրէն դէպի միւսը թարգմանութիւն չկայ, լեզուամտածողութիւնները տարբեր են, եւ ուրեմն վերնագրերն ալ ատիկա կ'արտացոլեն: Հայերէն վերնագիրը ժամանակի կարեւորութեան եւ անոր հետ քայլ պահելուն կ'ակնարկէ, իսկ անգլերէնը բան մը ձեւաւորելու, գոյացնելու եւ տեսանելի դարձնելու շուրջ կազմուած է, որ նոյնքան կարեւոր է:

«ՆՅ» - ԳԿԶ-ի նպաստատրած մշակութային այս նոր ծրագիրը իւրապատուկ է, կարծէք «մշակութային» անուանումի ետին կայ արհեստագիտութեան մշակոյթի շերտ մը, այսինքն՝ դասական առումով մշակութային ստեղծագործութիւնները՝ գրական, նկարչական, երաժշտական, թատերական... **արդեւ**-ի պարունակին մէջ բաւարար չեն. ի՞նչ է պատուածը:


Ծ.Մ. - Դարձեալ շեշտելով ծրագրին այժմէական գործօնը կամ միտումը, **արդեւ**-ին հիմնական նպատակներէն է ստեղծագործ աշխատանքները

րու միջոցով կապ մը ստեղծել անցեալին, ներկային եւ ապագային միջեւ. փորձ մըն է պայմաններ ստեղծելու որ անցեալը չճանայ, այլ մօտենայ եւ ներշնչէ, գոյացնէ ներկայ մը՝ ներկայի շունչով, ինչ որ ժամանակի ընթացքին եւ լայն առումով կայուն ապագայ մը երաշխաւորելու շրջարկ մը կրնայ ստեղծել: Առանց պարզ մշակոյթի, որեւէ ժողովուրդի համար յարատեւ եւ երկարաշունչ սնունդի աղբիւր չի կրնար ըլլալ:

Դասականը անշուշտ իր դերը ունի, անգնահատելի արժէք է թէ՛ ձեւաչափով, թէ՛ պարունակով: Բայց ինչպէ՞ս ստեղծել նորը, առանց որուն «դատարկութիւն» մը կը գոյանայ, արդէն գոյացած է, իսկ պարապին մէջ անկարելի է լիարժէք հասուննալ. ինչպէ՞ս կապ մը հաստատել կամ հաւասարակշռութիւն մը գոյացնել աւանդականին եւ նորին միջեւ: Արդ, այս նպատակի ծրագիրը պայմանները կը ստեղծէ որ նոր ձեւաչափերով ալ կարելի ըլլայ արտայայտուիլ, արեւմտահայերէնը ունենալով որպէս միջարկ: Մշակոյթներ եւ ինքնութիւններ միշտ կը զարգանան ու կը փոփոխուին, յատկապէս սփիւռքեան իրականութեան մէջ: Սփիւռքեան այսքան յար-

տը դնելով նորարարութեան գործօնին վրայ, յաւելեալ նեցուկ կանգնելու արեւմտահայերէն լեզուին: արդ եւս ծրագիրը պիտի խթանէ ստեղծագործ մտքերը՝ մշակութային արդիականութիւն մը գոյացնելու եւ արեւմտահայերէնով յղացուած նորաշունչ նախաձեռնութիւններ մշակելու:

Այսօրուան մարտահրաւէրներն ալ նոյնպէս ստեղծագործութեան համար բերրի պայմաններ կրնան ստեղծել. եւ պէ՛տք է ստեղծագործել, խնդիրները բանաձեւելով, եւ այ՛ն՝, (արեւմտահայերէնով. լեզուն ողջ է, հոս է, եւ պէ՛տք է պարեցնել զայն, շահմանափակել կամ չղասակարգել գործածութիւնը, այլ բանալ նոր մտահորիզոններ մայրենիով, փորձառական կիրարկութիւններ ներմուծել, լեզուով աշխատիլ եւ զայն աշխատցնել, զայն առնչելի դարձնել այսօրուան կեանքին եւ մտածողութեան: Պիտի ըսէի՞ վերագործարկել լեզուն որպէս արտայայտչամիջոց, զգալ անոր ուժականութիւնը եւ շահմանափակել կարողականութիւնը: Այս իրականութիւնը բոլորին կը վերաբերի, ուրեմն թիրախը բոլորն են, բոլոր անոնք որոնք լեզուի կրողներն են եւ կը ներշնչուին անկէ, բոլոր



րափոփոխ պայմաններուն մէջ մեր սերունդներն ալ պէ՛տք է ստեղծեն իրենց մշակութային իրականութիւնը, բնականաբար հիմնուելով նախորդող իրագործումներու եւ փորձառութիւններու վրայ. հարկ է ըսել թէ բոլորս կարիքը կը զգանք մշակութային վերելքի կամ «վերագարթօնքի» որպէս հաւաքականութիւն, զարթօնքներ որ արդէն պատահած են մեր պատմութեան ընթացքին, եւ մինչեւ այսօր մեզի համար ներշնչումի աղբիւրներ կը հանդիսանան: **արդ եւս**-ը կ'ուզէ խթանել զարգացումի եւ նորոգումի այս հոսանքները, առիթ ընծայելով որ հայ ստեղծագործ միտքեր արտայայտուին որեւէ ձեւով, իրենց իսկ իրականութիւններուն համապատասխան առնչելի նիւթերով, մերձենալով նորին, նոր ձեւաչափերով: Հոս աւանդականն ու «այժմէ»-ն, հինն ու նորը, նախորդն ու յաջորդը կը յարաբերին որպէսզի բոլոր տեսակի եւ ձեւաչափի գրսեւորումներ զարգանան թէ՛ դասական արտայայտչամիջոցներով, թէ՛ ալ թեքնական եւ նոր միջ կամ բազմազանակարգային միջոցներով: Ասոնք բնականաբար փոխկապակցուած են եւ իրերայաջորդ:

անոնք որոնք կ'ուզեն լեզուն գործածել, անոնք որոնք նորարար մշակոյթ մը կ'ուզեն կերտել որպէսզի աւելի երկար սնանինք անով, բոլոր անոնք որոնք համար ամէնէն բնական երեւոյթն է լեզուով մը արտայայտուիլ որ մէջդ է եւ որուն լեզուամտածողութիւնը կը կրես, նաեւ բոլոր անոնք որոնք կ'ուզեն լեզուն սորվիլ, եւ աւելի մօտէն ճանչնալ ու բացայայտել...: Այլ կերպ կարելի՞ է: Մեր ձեռքն է լեզուն բերել ժամանակակցութեան եւ նորարարութեան կիզակէտին:

Իսկ նոր ձեւաչափերուն անդրադառնալով, կրնայ բնականաբար թուիլ որ թիրախը աւելի երիտասարդն է որ կը տիրապետէ ժամանակակից թեքնաբանական միջոցներու, բայց հոս տարիքային եւ աշխարհագրական սահմանափակումներ չկան: Ծրագիրը բաց է բոլորին: Արեւմտահայերէնը գործածել փորձարկելով, ուժերը միացնելով, իսկ ան որ լեզուին չի տիրապետեր, զանց չէ առնուած, ընդհակառակն, ոչինչ կ'արգիլէ որ տարբեր ուժեր մէկտեղուին եւ միասնական ջանքերով գործ մը մէջտեղ բերեն: Ներարականութիւնը արժէք է. այս նպատակի ծրագիրը նաեւ ուղղուած է անոնք որոնք ընդհանրապէս լուռ են: Հոս, կ'արժեւորուի արեւմտահայերէնով ստեղծագործելը, շեշտը դնելով մշակոյթի յարակցական ուժին ու կարողութեան վրայ, նպատակն է ստեղծել բաց միջավայր, ուր բոլորը կրնան մշակութային իրականութիւն մը ստեղծելու, աստիկա պահպանելու գործընթացին մասնակցիլ եւ անոր պատասխանատուութիւնը կրել. հոս կը քաջալերուի ստեղծագործութիւնը եւ ներարականութիւնը. ուրեմն, թիրախը անոնք են որոնք կը կարծեն որ այս պարունակին մէջ կրնան ստեղծագործել եւ արտադրել արեւմտահայերէնով:

Հարկ է նշել որ **Խօսք առ**-ին յատկանիշն էր համեստ նպատակներ յատկացնել մեծ թիւով դիմողներու. նորարար մշակոյթի ծրագիրը իր կարգին տասը մեծ նպատակ կը յատկացնէ: Իսկ **արդ եւս** ծրագրի հանգամանքը եւ ծաւալը կը թելադրէ որ նպատակները ըլլան ա՛լ աւելի մեծ, նկատի ունենալով անոր կարեւորութիւնը որպէս հաստատութեանական յենարան մշակոյթ եւ լեզու անբաժան երկեակին:

«ՆՅ» - Անցեալ տարի **Խօսք առ** ծրագիրը մեկնարկած էիք, որ բաւական մեծ արձագանգ գտաւ: Մանաւանդ որ պսակաձեւ ժափրի պարտադրած մեկուսացման պայմաններուն մէջ, խօսք առնելու առիթ ու արտայայտուելու պահանջ կար: **արդ եւս**-ը շատ աւելի տարողունակ ծրագիր է եւ աւելի երկարաշունչ ու հանգամանալի աշխատանք պահանջող: Որո՞ւ կը յղուի: Ո՞վ է թիրախը՝ մշակութասէր, ստեղծագործ սերունդի ներկայացուցիչն է, որ նկատի ունիք:

«ՆՅ» - Նպատակներուն մէջ նշուած էր նաեւ խմբային արտադրութեան պարագան: Կրնա՞ք աւելի պարզաբանել:

Ծ.Մ. - **Խօսք առ**-ը ծնունդ առաւ անմիջական պահանջքէ մը. կ'ապրէինք աննախընթաց պահ մը որ կը թելադրէր խօսիլ, արտայայտուիլ մեզ յուզող բաներուն մասին՝ մեր իսկ լեզուով. եւ շատ ըսելիք կար ու կայ տակաւին. ողջունելի էր տեսնել մեծ թիւով մասնակցութիւնը եւ համայն աշխարհը յուզող երեւոյթներու շուրջ հայերէնով արտայայտուելու այդ պահանջքը. **Խօսք առ**-ը առիթ ընծայեց որ մասնակիցները հայերէնով մտածեն եւ խօսին կենսոլորտի աղէտին մասին, մարդու իրաւունքներու, կանանց իրաւունքներու, բռնազաղթածներու եւ գաղթականներու վիճակներու, ընկերային զանազան երեւոյթներու, քաղաքական նիւթերու, ազգային հարցերու, աշխարհաքաղաքական յարացոյցներու, համամարդկային արժէքներու, աշխարհը տանջող հարցերու լուծումներ գտնելու եւ շատ մը այլ բաներու մասին՝ հայերէնով:

Ծ.Մ. - Ճիշդ է որ երբ ստեղծագործութեան մասին կը խօսինք, յաճախ անմիջապէս անհատ մը նկատի կ'ունենանք. բայց պայման չէ որ ստեղծագործութիւն մը անհատով պայմանաւորուած ըլլայ: Այսօրուան ընձեռած հնարաւորութիւնները բազմազան են, որոնք կրնան համագործակցութեան եւ ստեղծագործութեան նոր դռներ բանալ. աշխարհասփիւռ արեւմտահայախօսը պէ՛տք է կարենայ իր լեզուընկերոջ հետ համագործակցիլ, նոյնիսկ եթէ անոնք տարբեր ցամաքամասերու վրայ կ'ապրին: Կան նաեւ միջտարիքային եւ միջգիտակարգային համագործակցութիւններու առիթներ, ինչո՞ւ զանց առնել ատոնք: Այն ինչ որ կը

Խօսք առ-ին նախորդած էր Լիբանանի նորարար մշակոյթի ծրագիրը: Այս աննախադէպ ծրագրերը մեկնարկուեցան տարբեր պայմաններու տակ, բայց երկուքին ալ նպատակն էր ստեղծել նախադրեալներ արեւմտահայերէն լեզուն եւ մշակոյթը հարստացնելու եւ զարգացնելու, որպէսզի անոնք վերստին դառնան կենսունակ: **արդ եւս**-ին նպատակն է այս ընթացքը շարունակել եւ ամրապնդել, շեշ-

ստեղծուի, բոլորին կը պատկանի, եւ եթէ կողմ ենք միասնական մշակութային ժառանգութիւն մը ունենալուն, պահպանելուն եւ անով սնանելուն, ապա պէտք է կարենանք զայն նաեւ միասնական ուժերով կերտել: Լեզուի «հարց»-ն ալ հոս իր լուծումը կրնայ գտնել, այսինքն յաճախ լեզուին շտիրապետելը, կամ լեզուով երբեք աշխատած չըլլալը խոչընդոտ հանդիսանալու փոխարէն, կրնայ համագործակցութեան դուռ բանալ. մէկը կրնայ ստեղծագործութեան տարրը ապահովել, միւսը լեզուինը, գուցէ երրորդ մըն ալ կիրարկութեան համագործումը, որ նոյնքան կարեւոր է գործը ապրեցնելուն մէջ, որքան ստեղծագործ գաղափար մը ունենալը:

«ՆՅ» - Որո՞նք են դիմելու պայմանները:

Շ.Մ. - Այս նպատակի դիմումնագիրը բաց է բոլոր անոնց որոնք կը փափաքին արեւմտահայերէնով մշակութային նիւթեր արտադրել Սփիւռքէն եւ Հայաստանէն:

Դիմումները կրնան կատարուիլ անհատական կամ խմբային, ինչպէս նաեւ ոչ-շահութաբեր կազմակերպութիւններու կողմէ: Տասնըութ տարեկանէն վեր բոլորը կրնան դիմել, բացի շահոյթ հետապնդող կազմակերպութիւններէ անշուշտ: Պարտադիր չէ որ դիմողները ըլլան կայացած կամ փորձառու արուեստագէտներ:

Ծրագրերը կրնան ըլլալ բազմա/միջգիտակարգային, արուեստի եւ մարդաբանական գիտութիւններու տարբեր բնագաւառներէ. գաղափարներ, փորձառութիւններ, եւ տարբեր զգացումներ արտայայտելու ստեղծագործական գրասեղաններ, որոնք կրնան ներառել հետեւեալ ձեւաչափերը, բայց չեն սահմանափակուիր անոնցմով

- Տեսողական արուեստներ:
- Գրականութիւն, գրաքննադատութիւն, վերլուծական յօդուածներ, թարգմանութիւններ (ել.գիրք/գիրք, ձայնագիրք, թերթ, ամսագիր, կայքէջ, առցանց ներկայութիւն, շարանկար):
- Բազմա/միջգիտակարգային բնագաւառներ, որոնք գոյացած են արդի հաղորդակցութեան ձեւերու շնորհիւ:
- Նոր երաժշտութիւն:
- Թատրոն, կատարողական արուեստներ:
- Տեսերիզներ, եւ այլ արտայայտչամիջոցներ՝ կահոնքներ (installations), animations, blogs, YouTube-ի կայաններ, podcasts, յաւելուածներ (applications), խաղեր եւ այլն:
- Չայնասփիւռի յայտագրեր եւ այլ հեռարձակումներ (առցանց ծրագրեր):

Վերջնաժամկէտը Յունուար 31-ն է, շմոռնա՛ք. իսկ մանրամասնութիւններուն կրնաք ծանօթանալ Հիմնարկութեան կայքէջէն:

«ՆՅ» - Նման ծրագիր մը ճամբայ հանելը, կը պահանջէ անկասկած, աւանդական ծանուցման եղանակին կողքին ստեղծագործ սերունդին հասանելիութեան ցոր ճանապարհներ՝ ընկերային ցանցեր... թերեւս՝ սիրուած արուեստագէտի մը կողմէ ծանուցուիլ... գրաւորէն լատեստողական միջոց մը... :

Շ.Մ. - Անկասկած. հասանելիութիւնը լուրջ մարտահրաւէր մըն է բոլոր բնագաւառներուն մէջ, նա՛մանաւանդ հայկական աշխարհին մէջ. այսինքն չի բաւեր բան մը ծրագրել, ստեղծել, պէտք է անկէ ետք լուրջ եւ հետեւողական աշխատանք տանիլ որ ստեղծածիդ մասին մարդիկ գիտնան, հասնին անոր, օգտուին անկէ, որ գործը մտածելու տեղ տայ...: Շատ անգամ ձեռնարկներու, միջոցառումներու կամ աշխատանքներու մասին կը լսենք, բայց ատոնց մասին միայն տեղեկանալը կրաւորական դերի մէջ կը դնէ մեզ. հոս հակառակն է, եւ ամենակարեւոր ազդեցութիւնը ատիկա կրնայ ըլլալ. այսինքն կը լսես ծրագրին մասին, բայց քեզի՛ ուղղուած է, նաեւ քեզի՛ կը վերաբերի, «հրաւիրուած» եւ մտածելու, գործելու, հարցադրելու, հակազդելու, քննական մօտեցումով նայելու, ինչո՞ւններու շարք մը շարելու... կրաւորական չես, այլ «ներգործող»: Իսկ այս ազդեցութեան հասնելու համար, կը ջանանք տարբեր միջոցներով խօսիլ այս ծրագրին մասին, գործի դնելով Հիմնարկութեան ցանցերը, ընկերային ցանցերը, թիրախաւորելով թէ՛ Սփիւռքը, թէ՛ Հայաստանը: Շատ կարեւոր են նաեւ միջհայկական համագործակցութիւնները, միջհայկական ցանցը պէտք է առողջ եւ գործուն ըլլայ, համագործակցութիւնները պէտք է բնական եւ օրկանական ըլլան, հասունութիւնը կու գայ բացուածութեամբ, երբ համագործակցիս, կը սորվիս, կը զարգանաս ու կը հասուննաս: Նաեւ դիմեցինք եւրոպական կառոյցներու որպէսզի «խօսուի» այս մասին, նոյնիսկ եթէ դեռես հրապարակային չէ, որպէսզի խորքային զրոյց տեղի ունենայ թէ ինչո՞ւ պէտք է խթանել մշակոյթի ստեղծումը. կարեւոր էր նաեւ արտահայկական նայուածք մը, դուրսէն դէպի ներս, որպէսզի սորվինք անոնց փորձառութիւններէն, իսկ իրենք՝ մեր, որպէսզի «վտանգուած լեզու» եզրն ալ դուրս գայ իր կրաւորական վիճակէն եւ գործի վերածուի:

Հարցազրոյցը վարեց՝ ԺԻՐԱՅԻ ԶՈՒԱՔԵԱՆ ■